



HAI ARI

ՀԱՅ ԱՐԻ

ՈՐԿԱՆ ՔՐԱՆԱԿՅԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ
ORGANE DES SCOUTS ARMÉNIENS EN FRANCE

Բ. ՏԱՐԻ ԹԻԻ **- 8 -** 1931 * * ՅՈՒՆԻՍ-ՅՈՒՂԻՍ * *
 2-e ANNÉE No. * * JUIN-JUILLET * *

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԵՏԻՆ ԽՕՍԳԸ	Գ. Մեծատուրեան
ՄՕՐԹԻՄԸՐ ՇԻՖ	Հայ Արի
ՎԱԳՐ ԽՈՒՄԲԻ ՀԱՆԴԵՍԸ	Հայ Արի
ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒՆ ԲԱԺԻՆԸ	Ա. Բեյլա
ԱՐԻՆՈՅՇԻՆ ԲԱԺԻՆԸ	Վ. Բեկզատեան
Ի՞ՆՉ ԵՆ ԱՐԻՆՈՅՇՆԵՐԸ	Զ. Խաննեան
ԼԻՕՆԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ՀԱՆԴԵՍԸ	Մ. Միքայելեան

Նկարներ սկանուտական կեանքէն,
 Միութեան կեանքը, սկանուտական լուրեր

Գինն է 2.50 ֆրանք

HAÏ ARI

REVUE MENSUELLE

Organe de l'association des Scouts Arméniens

Reconue par le Bureau International de Scoutisme

Directeur: KOURKÈNE MEDZADOURIAN

Հ Ա Յ Ա Ր Ի

ՕՐԿԱՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

Կը հրատարակուի ամիսը մէկ անգամ խմբագրական մարմնի մը կողմէ

Յօդուած և դրամական առարկաները ընել հետևեալ հասցէին՝

ԳՈՒՐԳԷՆ ՄԵՇԱՏՈՒՐԵԱՆ

3, Rue Gustave Tricard


BAGNEUX (SEINE) FRANCE

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ֆրանսա, Սուրիա և Պալեստինա տարեկան 25 ֆրանկ

Ուրիշ երկիրներ ,, 2 տարա

Հատը ձեռքէ կը ծախուի 2.50 ֆրանկ



Բ. ՏԱՐԻ
ԹԻԻ
- 8 -

ԱՄՍԱԳԻՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ

ՅՈՒՆԻՍ
ՅՈՒԼԻՍ
1931

ՊԵՏԻՆ ԽՕՄԲԸ

„Ա. գ գ ա յ ի ն բ ա ն ա կ ու մ“

Այս ամառ երեք տարի պիտի ըլլայ մեր Միութեան կազմութիւնը: 1928ի ամառէն սկսանք տարածել շարժումը՝ Մասնահիւղեր հիմնելով Ֆրանսայի զանազան հայաշատ կեդրոններուն մէջ: Պարբերական այցելութիւններով և մասնակի բանակումներով ջանացինք ամէն տեղ Միութեան ծրագիրը գործադրել տալ. երեք տարի յետոյ փափագելով այս աշխատանքին արդիւնքը տեսնել, որոշած ենք կազմակերպել մեր առաջին «Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ՃԷՄՊՈՐԻ»ին որուն պիտի մասնակցին մեր բոլոր մասնահիւղերը: Տեսակ մը «մարդահամար» պիտի ըլլայ այս բանակումը, և 15 օրուայ ընթացքին բոլորին ցոյց պիտի տանք թէ ինչ արդիւնքի մը հա-

սած ենք արդէն: Բանակումը դրած ենք մեր հնամակալ Մարմինին բարձր հովանաւորութեան տակ. անոր կողմէն ֆրանսացի ազդեցիկ անձնաւորութիւններու խմբակ մը զանազան միջոցներով պիտի դիւրացնէ մեր աշխատանքը: Ֆրանսացի և օտար սկաուտ պետեր պիտի աջակցին մեզի որպէսզի մեր առաջին ընդհանուր բանակումը իսկական յաղթանակ մը ըլլայ: Անկասկած ամէն Հայ Արի հիմակուրդն կը պատրաստուի, և օգոստոս ամիսին «միշտ պատրաստ»ի երդուեալ բանակը շէն բանակավայրի մը մէջ, ցոյց կուտայ իր 3 տարուան կատարած գործը — պատասխան ամէն անոնց որ դեռ անկարող են հասկնալ մեզ:

302-2001

ԲԱՐԻ ԳՈՐԾ ՄԸ

«Փարիզի վագրեր»ու ցերեկոյցի երեկոյեան հանդէսի սրահը ներկայացաւ մեզ հայ երիտասարդ մը որ Պրիւս-սէլէն ստիպուած Փարիզ էր եկեր, բարոյիս անձանօք. եկեղեցին ամաշի գտած ըլլալով «երիտասարդ Քրիստոնեայ»ներու շէնքը դրկեր էին զինք և ան պատահմամբ մեր տղոց ներկայացաւ: Խնդրելով որ այս գիշերուան ծախսերը հոգան որպէսզի յաջորդ առաւօտ իր գլխուն հարը հայի: Վայրկեանի մը մէջ Հայ Արիները պէտք եղածը ընելով կարգադրեցին մեր տղուն հարցը և ան շնորհակալութեան խօսքերով հեռացաւ մեզմէ: Անկասկած վագրերու հանդէսին յայտագրին ամենագեղեցիկ մասը այս անակնկալ բարի գործը եղաւ, որը պատիւ կը բերէ իրենց:

ՓԱՐԻԶ III

Յունիս 1 էն սկսեալ Փարիզի շրջանին մէջ սկսուտական խումբ մըն ալ կ'աւելնայ: Նկատի առնելով Իսի և Շաւիշի մեր տղոց քիւրին շատնալը,

Բ Ա Ն Ա Չ Ե Ի

Հայ Արիներու Միութեան Լիօնի Մասնաճիւղը իր Ա. տարեգարձին ստիժիւ, քաջալերուած Լիօնի Հայ զաւութին անվերապահ համակրանքէն, այսօրուայ տօնին անգամ մը եւս իր անմիջական նուիրումը կը յայտնէ Հայ սկսուտական խաչային:

Իր յարգանքի ջերմ արտայայտութիւնը կը զրկէ Միութեան Հովանաւորող և անոր նախագահ պ. Ա. Սատիսեանին: Մըշտական հաւատարմութիւնը և եղբայրական զգացմունքը կը յայտնէ Ընդհանուր Պետին և Գործադիր Խորհուրդին, անգամ մը եւս գոչելով. — միշտ պատրաստ:

Ստորագրուած՝

Լիօնի վարչութեան Բարտուղար ՄԱՆՈՒԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Խմբագրուող Գ. ՏՕՆԷԼԵԱՆ

Վաւերացուած ժողովուրդին կողմէ և հանդէսի նախագահ ու Լիօնի Ազգային Միութեան նախագահ պրն. ՄԱՄԱՍ ԱՐԲԱՀԱՄԵԱՆԻ կողմէ:

Գ. Խ.ը որոշած է առանձին խումբ մը կազմել հոն, անոր խմբագրութիւնը յանձնելով վասիկ Տէր-Գաւթեանին: Լաւ նախախաղով տղաքն ու խմբագրութիւնը կ'աւելնայ և հիմակուց բսել. — նոր ոյժ մը ևս Միութեան համար:

ՀԱՆԳԻՍՆԵՐՈՒ ՇՐՋԱՆ

Վերջին եռամսեան հանդէսներու շրջան եղաւ: Մարտէյի եւ Փարիզի Գայլիկներէն յետոյ, Փարիզի Ա. եւ Բ. խումբերը իրենց երեկոյցը տուին որը յաջող անցաւ: Յետոյ Փարիզի վագրերը ունեցան իրենց առաջին ցերեկոյցը, լաւ կազմակերպուած, որը նոյնքան յաջող էր: Մայիս 23ին Լիօնի մեր սկսուտական և Գայլիկներու խումբերը տօնեցին իրենց կազմութեան առաջին տարեդարձը, հսկայական երեկոյցով մը, որուն մասնակցեցան Լիօնի բոլոր հայկական միութիւնները: Այս հանդէսները արդիւնէն էին ձմեռնային աշխատանքին, և հիմա տղաքը կը պատրաստեն ամառուան բանակումները:

Բարի բանակում բոլորին: ԳՈՒՐԳԷՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔ

ՄՈՐԹԻՄԵՐ ՇԻՖԻ ՄԱՀՐ

Միջազգային Գրասենեակէն իմացանք յանկարծական մահը Մ. Մորթիմէր Շիֆի, անգամ Միջազգային Կեդրոնական Կոմիտէին և նախագահ Միացեալ Նահանգներու սկսուտներուն: Մորթիմէր Շիֆ Ամերիկայի սկսուտական հիմնադիրներէն մին էր և կաւ և

Մորթիմէր Շիֆի մահուան առթիւ Հայ Արիներու ընդհանուր պետը ցաւակցական նամակ ստացաւ Միջազգային Գրասենեակի տնօրէնէն: Հայ Արիներու Միութիւնը ցաւակցական նամակներ ուղղեց Միջազգային Գրասենեակին, Միջազգային Կոմիտէին և Ամերիկայի սկսուտներուն:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆԸ

Հայ Արիներու Միութիւնը հայկական միակ դուռ սկսուտական կազմակերպութիւնը ըլլալով կը լրացնէ միջազգային սկսուտութեան բոլոր պայմանները և ճանչցուած է Միջազգային Գրասենեակէն ու լրագործուած Հայ սկսուտական ընդհ. շարժում մը զեկալարելու համար:

Վերջերս ցաւով կարդացինք ուսմանական սկսուտական պաշտօնաթերթին մէջ որ Ռուսաստանի մէջ գտնուած Հայ մարդասկսուտական խումբերը որոնք մեր Միութեան շէնք պատկաներ, դիմած են և ԼՈՒԾՈՒՄԸ Ռուսիայի սկսուտներուն մէջ: Եւ ասիկա ճիշդ այն ժամանակ երբ մեր Միութեան տեղւոյն Մասնաճիւղը մեր օժանդակութեամբ բանակցութեանց մէջ էր Ռուսաստանի կազմակերպութեան ճանչըցրել տարու համար զինքը իրը Հայ անկախ սկսուտական խումբը:

Մենք ցաւով կ'արձանագրենք այս իրողութիւնը, որ ցոյց կուտայ թէ որ աստիճանի անհասկացող են այդ կազմակերպութեան վարիչները որոնք կը նախընտրեն լուծուիլ օտարներու մէջ քան թէ Հայ Արիներու Միութեան հետ համաձայնելով ազատով պահելու Հայ սկսուտական խաչական խումբերը:

ՀԱՅ ԱՐԻ



Մ Ո Ր Թ Ի Մ Է Ր Շ Ի Ֆ
20 տարիէ ի վեր իր անհաշուելի հարստութիւնը ի սպաս դրաւ սկսուտական միւսոյն ժամանակ զեկալարելով Ամերիկայի սկսուտական շարժումը: Իր հմտութիւնը զինքը Միջազգային Կոմիտէին ալ անգամ զարձուց ուր մեծ ծառայութիւններ մատուց սկսուտական շարժման: Իր մահով սկսուտութիւնը կը կորսնցնէ իր լուսարոյն պետերէն մին:

ՎԱԳՐԵՐՈՒ ՀԱՆԳԵՍԱԸ

Մայիս 16ի կիրակի օր, Ինիօն տը Բարիի սրահին մէջ տեղի ունեցաւ Հայ Արիներու Միութեան Փարիզի «Վազը» խումբի տարեկան հանդէսը, նախագահութեամբ պ. Ռուբէն Բէրբէրեանի:

Հանդէսը սկսաւ խմբային անուանումով, որմէ վերջ խմբապետը, Արմէի Ջամալեան բացատրեց խումբի գործունէութիւնը և անոր նպատակը, ըստ հաստատական շարժումին օգտակարութիւնը շեշտեց, մանաւանդ հայութեան համար, և բեմ հրաւիրեց նախագահ պ. Բէրբէրեանը, որ բացատրեց մեր Միութեան նպատակը, և կոչ ըրաւ բոլորին օգնելու և քաջալերելու հայ նոր սերունդի այս ձեռնարկին:

Սումբի խմբակները տունն իրենց ներկայացումները բոլորն ալ յաջող, և առաջին մասը վերջացաւ Փրանսերէն գրուած թատերախաղէ մը յետոյ, պատրաստուած Ստեփան Տ. Ստեփանեանի կողմէ:

Միջնորարքին տեղի ունեցաւ ձեռնարկան աշխատութեան մը աճուրդը որմէ զուգար 530 Փրանք, շնորհիւ պ. պ. Բէրբէրեանի, Իսրայէլեանի Վաչեանի, Ջամալեանի և Ալթունեանի մեծ մասնակցութեան:

Միջնորարքին այցելելիք նաև ձեռնարկան աշխատութեանց ցուցադրութիւնը, ուր վազրերը այնքան ճարտար կերպով շինուած նմուշներ ցոյց տուն մեզ:

Հանդէսին խօսեցաւ պ. Մարք Սանիկն որ ներկայ էր նոյնպէս, և իր ձոնը անդամ մը ևս հայաստանի քարձը զգացմունքով սողորուած էր:

Իրեն պատասխանեց Ընդհ. Պետր Փրանսերէն և յետոյ խօսեցաւ Միութեան կողմէ:

Սկսուածները ներկայացուցին «Երբ-Վազրեան»ը և մտպական լազարով ցուցադրելէ յետոյ խումբին գործունէութեանն զրուակներ հանդէսը վերջացաւ:

Ամէնքս բաժնեկցանք Վազրերէն մեր ջերմազին շնորհակալութիւնները յայտնելէ յետոյ իրենց այս գեղեցիկ հրաւերին համար: Մասնաւորապէս շնորհակալութիւն յայտնեցինք պ. Ռուբէն Բէրբէրեանի և Վազրերու խմբապետ Արմէի Ջամալեանին, որ մեզի ցոյց տուաւ իր խումբին աշխատութեան այսքան գեղեցիկ արդիւնքը:

Հանդէսին ներկայ էին Փարիզի շրջանի Միութեան սկսուածները և իրենց խումբերը, գայլիկները: Ներկայ էին նաև օտար սկսուածներ և Փրանսական խումբերու ներկայացուցիչները:

Հայ Արիսոյճներն ալ իրենց խմբապետութիւններով ներկայ էին և ինչպէս Գայլիկները և Սկսուածները, մասնակցեցան աճուրդին:

Հանդէսին յետոյ Ընդհ. Պետր մասնաւոր շնորհակալութիւնները յայտնեց խմբապետ Ջամալեանին, փոխ-խմբապետ Ա. Փանտեանին և Արեւիկայ խմբակին:


Հ. Ա.



ՀԱՆԱԲՈՒՆԻ ԽԱՂ

Գծուած պատկերը ցոյց կը տայ խաղին ձևը և հաւաքունին տեղը: 20 հաւերը և 2 աղուէսները դասաւորուած են այնպէս, ինչպէս նշանակուած է: Հաւերը ձերմակ կոճակներն են, իսկ աղուէսները սեւ են և աւելի մեծ:

ալ հաւաքունը չի կրնար լեցուել, աղուէսներով խաղացողը շահած կ'ըլլայ:



Մի խաղացող հաւերը ունին, միւսը 2 աղուէսները:

Շահելու համար՝ ան որ հաւերը կը խաղցնէ պէտք է առաջ գալով յաջողի հաւաքունի 9 տեղերը գրաւել: Բայց քաղցած աղուէսները կը հսկեն: Հաւերը միայն կրնան առաջ երթալ (ոչ ետ) և մի-մի տեղ փոխելով, աղուէսները կրնան ամէն ուղղութեամբ երթալ: Երբ հաւի մը ետեւը բաց տեղ մը կայ, աղուէսը կրնայ հաւի վրայէն ցատկել, բաց տեղը գրաւել. հաւը կերած կը լինի և մէջտեղէն կը հանւի (դամայի խաղի նման): Եթէ միայն 8 հաւ մնան, այնպէս որ

Ամէն մէկ խաղացող հերթով կը խաղայ, իրաւունք չկայ իր հերթին տեղը չփոխել:

Տեսնենք բոլոր հաւերը զոհ կ'երթան հաւաքունը գրաւելու համար, թէ՞ քնած աղուէսները ամօթով կը մնան: ԱՔԵԼԱ.

ՄՈԳԼԻ ԽՈՐԱՍԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Տարեկան անձրեւները արդէն անցել էին, Ջանգլը վառվառն էր նոր կեանքով. որսը ամէն տեղ առատ էր: Կուշա տարի մը պիտի անցնէին ամենքը և գայլերու ազատ ցեղը զուարթօրէն կը վայելէր խաղաղ կեանքը...

տարածէ ամէն լուր, լաւ կամ վատ, կանչեր էր երկինքի վերէն՝ «Դօօլը, Դօօլը կուգա՛յ, վաղը հոս կը հասնի»: Իրաւ էր. սարսափած եղջերուները արդէն փաղչելով կ'անցնէին և ժամ մը վերջ, Ջանգլի խորքում ամենքը կը փախսային՝ «Դօօ՛լը, Դօօ՛լը կուգա՛յ»:

Ինչո՞ւ յանկարծ կեանքը պաղեց Ջանգլիում, ինչո՞ւ մուսոյ էին գայլերը որ կը շտապէին դէպի Խորհուրդի ժայռ Արեւիկայի կանչին: Շի՛ւ, անպղը որ կը

Կարմիր շունը—Դօօլը—մահն է որ կը վաղէ շորս ոտքի վրայ: Երբ սովը կը քշէ կարմիր շունը

իր որսի սովորական վայրերէն, ոչ մէկ բան կրնայ անոր դիմադրել. կամ պէտք է փախչել կամ մեռնել, որովհետեւ ազահ եւ վախկոտ շունները հարիւրներով բանակ կազմած միայն կը շարժին իսկ հարիւրներու ո՞վ կրնայ դիմադրել:

Երկար խորհրդակցեցան գայլերը, վիճեցին, փորձառու հին գայլերը խօսեցան եւ նոյն իսկ գայլերը խօսեցան, նոյնպէս այդ տարւան նոր որսորդները. բայց ինչ որ ալ ըսին դիմադրութիւնը մահ կը նշանակէր, փախուստը՝ անպատեհութիւն եւ սով ու մայր գայլերը կը սոսկային իրենց նորածին ձագերուն համար:

Լուսինը արդէն մայր կը մըռնէր երբ Մօզլին վերադարձաւ: Գացեր էր երկար խօսակցելու Զանգլիի իմաստուններու իմաստունին հետ: Կա՛ան, հսկայ օձ մը, խորամանկ էր ինչպէս օձ մը միայն կրնայ խորամանկ ըլլալ — Մօզլին, մարդ-գայլը, արձակեց Ազատ Յեղին կանչը՝ «Գայլե՛ր, նոյն ցեղէն ենք մենք: Ինչպէս ճշմարիտ է որ Մօզլին մեծցեր է մայր-գայլին կաթով, այնքան ճշմարիտ է իր սէրը իր եղբայրներուն հանդէպ: Հանգիստ գացէք ձեր սրջերը, վաղը լուսնի ծագումին գանուէք Վէնգունգայի ափին, առ՛ւտ, Մօզլիի խօսքը, խօսք է»:

Երբ ամենքը կը ցրուէին, Մօզլին պառկած Աքելայի սաքին կը պատմէր անոր իր ծրագիրը եւ գայլերու պետը հաւանութիւն կուտար «գորտուկի» հնարքին:

Բառ՛ւ առ՛ւ հաջեցին կարմիր շունները երբ տեսան Մօզլին, որ իրենց ուղղութեամբ կ'առաջանար եւ վրան վազեցին որ պատապատան անեն:

Արեւը շատոնց ելած էր եւ Շիլի որ վերէն ամէն ինչ կը տեսնէր ճշայ. «Ո՛ննթ է, Մօզլին խենթ է, տես ուր կ'երթայ»: Բայց Մօզլին կ'ուզէր միայն մինչև գիշեր Դօօլը կանգնեցնել: Տղան մագլցեց ծառի մը վրայ եւ սկսեց շունները բարկացնել: Ծառ մը կարգաց անոնց գլխուն՝ բացատրելով թէ կարմիր շունները որչափ յիմար եւ որչափ վախկոտ են: Ետքը անոնց լաւ մը հայհոյեց գլուխներին ճիւղեր նետելով: Գազազած շունները պաշարեցին ծառը: «Ա՛հ, ըսին, մերկ կապիկ, ողջ չես ազատիր մեր ճանկերէն» եւ առամները կը ճտացնելով կը սպասէին Մօզլիի իջնելուն:

Մուլթը սկսաւ: Ժամանակը ալ եկած էր: Մօզլին գայլերու որսի կանչը արձակելով ծառէն ցատկեց եւ սկսեց դէպի գետը վազել շուններու ամբողջ բանակը ետեւէն:

Արագ կը վազէր Մօզլին եւ շունները կը հեւային իր ետեւէն: Վերջապէս հասաւ Վէնգունգային: Գետը այստեղ կ'անցնէր ժայտերու մէջէն, խոր քարայրներու քովէն — նշանաւոր քարայրները ուր հաստատուած են մեղուները իրենց անթիւ փեթակներով — դէպի քարայրներն է որ Մօզլին կ'ուզէր Դօօլը առաջնորդել եւ կարմիր շունները ոտնոցներով կը մօտենային:

Մեղուները այս ժամին փեթակները քաշուած կը քնանան... եւ գիտէք թէ քունէն դուրս քաշած մեղու մը որչափ կատապի է: Մօզլին սկսաւ քարեր նետել, խառնել փեթակները, արթընցնիլ մեղուները եւ երբ շունները հասան ան արդէն գետն էր նետուեր եւ կը լողար դէպի ափ

ուր ուժասպառ ելաւ իր ցեղակից գայլերու քով:
Հոն, փեթակներու մէջ մեղուները կատապի ամպ մըն էր ելած. բզզացող, կուրացնող, խայթող ամպ մը: Կարմիր շունները գլուխնին կորցրած կ'ընթացին ժայտերու մէջ եւ կը ջախջախուէին կամ գետի մէջ իջնալով կը խեղդուէին: Չը տեսնուած պար մը կը պարէին հոն կարմիր շունները:

Շուներու մեծ մասը այսպէս մեռան, իսկ ետեւից եկողները հասկնալով թէ ինչ թակարդի մէջ են ինկած, գլուխնին առին ու փախան:
Այսպէս է որ Մօզլին փրկեց գայլերու ցեղը: Իսկ մինչև լոյս, գայլերը ուրախութենէն կ'ոռնային Վէնգունգայի ափին: Դօօլը, անյաղթ Դօօլը կը փախչէր:

ԱՔԵԼԱ

ՊԻԵՌՎԻԼԻ ԲԱՆԱԿՈՒՄԵՆ



ԵՐԳՈՒ ՆԿԱՐ ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒՆ ՊԻԵՌՎԻԼԻ ԲԱՆԱԿՈՒՄԵՆ

ԱԶԻ ՆԿԱՐԸ ԿՐ ՆԵՐԿԱՅԱՅՆԵ ՎԵՅՆԵԱԿԱՊԵՏՆԵՐԸ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒՄԸ ԸՆԳԷ.
ՊԵՏԻՆ ԷՆՏ: ԶԱՆ ԿՈՂՄԻ ՆԿԱՐԸ ՅՈՅՅ ԿՈՒՏԱՅ ՆԱՆԱԿԱՆ ԳԱՐՄԱՆ ՓՈՐՉ ՄԸ



ԱՐԻՆՈՒՇԻ ԲԱԺԻՆԸ

Քոյրի՛կ,

Արիևուշի բնուրիւններ՝ նորընծայ

Ինչ լաւ նուէր ես ստացել այս դարնան համար՝ երկու էջ Հայ Արիի մէջ ամէն ամիս, յատուկ քեզ համար... Երկու էջ, որոնց մէջ կարող ես գործադրել գրողի քո ջանքը տաղանդը, քո ազատ կեանքը բաց օդի բանակումի, արշաւի ժամանակը իր բոլոր առողջ հրապոյրներով, և այդպիսով ուժեղացնել քո ոգեւորութիւնդ ու մանաւանդ տարածել քո նորածին ու թարմ սկսուսական ոգին:

Բախտաւոր ես դու, և քո խումբը, որ ծնւել էք ոչ մենաւոր, ծանր դժուարութիւնների մէջ, այլ ունէք եղբայրներ, հին, վարպետ սկսուսներ, որոնք իրենց գնահատելի աջակցութեամբ ձեզ համար բաց են անում ճանապարհը՝ աւելի խաղաղ ու արեւոտ:

Ուստի, Արիևուշ, ձեռքդ բարձրացրո՛ւ և ուղարկիր քո եղբայր Արիներին, քո շնորհակալութեամբ լի, սրբատաղին սկսուսական բարեւոյ:

ԽՄԲԱՊԵՏՈՒՆԻ ԶԱԼԻ

(Կ'օգտուինք ուրեմն այս հիւրասէր էջերից և կը հրատարակենք այստեղ քննութիւններդ, Արիևուշ: Այս անգամ նորընծայի ու թեկնածուհու քննութիւնները, հետեւալ համարներում կը տանք երկրորդ և առաջին կարգի:)

- 1) 10—18 տարեկան լինել.
- 2) Հասկանալ ու անդիր գիտնալ Արիևուշի դաւանանքը.
- 3) Գիտնալ սկսուսական բարեւոյ ու իր նշանակութիւնը.
- 4) Բացատրել ինչ է «բարի գործը» — օրինակ տալ.
- 5) Հետեւալ խոստումը ստորագրել:

Խօսք եմ տալիս, որ կանոնաւոր կերպով կը հետեւեմ ու կը մասնակցեմ խումբիս հաւաքումներին, կ'աշխատեմ ամէն օր դառնալ աւելի արժանի Արիևուշ կոչման և իւրացնել Արիևուշի դաւանանքը:

Թեկնածու

Մարմնամարզական յատկութիւններ.

- 1) Տողանցքի ընդհանուր շարժումներ.
- 2) 3 բոյգ վազել առանց յոգնութիւն զգալու.
- 3) Ցատկել դէպ առաջ, դէպի վեր, դէպի ձախ ու աջ, նախապէս վազելով կամ տեղնու տեղը:
- 4) Կատարել 5 մարզանքի տարբեր շարժումներ ու բացատրել նրանց օգտակարութիւնը:

Գործնական զարգացում

- 1) Իմանալ մաքուր կերպով մի ծրար կապել.
- 2) Վարժութեամբ գործածել 7 հետեւալ կապերը՝ օղակ, սանդուխ, դերան, ջուլհակ, անցորդ, ձկնորս, վզկապ.
- 3) Պատրաստել մի կարի քսակ.
- 4) Ճանաչել քննութիւնների և պաշտօնների դանադան աստիճաններն ու նշանակները.
- 5) Կիմի խաղի մէջ յիշել ամենաքիչը 16 ստարկաներ.
- 6) Իմանալ գործածել հետախուզական նշանները.
- 7) Մի երգ, կամ մի նկար ներկայացնել քննիչին:

Բարոյական զարգացում

Բերանացի կամ գրաւոր բացատրել դաւանանքի կամ խոստումի մի յօդուածը:

Ի Ն 2 Ե Ն ԱՐԻՆՈՒՇՆԵՐԸ

Ձե՛ք կարծեր որ բաւական դժուար է այս հարցումին պատասխանելը:

Արիևուշները այնչափ բաներ են որ՝ հանելուկ մըն է գտնելը ինչ որ չեն: Ուրեմն եկէ՛ք հարցումը հակառակ կողմէն պատասխանել ջանանք:

Արիևուշները զինուորներ չեն, ինչպէս անձանօրները կը մտածեն երբ կը տեսնեն անոնց կարգաւ փայլումներ երբ խումբ մը կը տեսնուի: Անոնք գուար քեն եւ պարզ են ինչպէս դուք էք:

Անոնք հպարտ չեն իրենց վաստկած նշանակներու համար, որոնք կը տեսնէ՛ք իրենց աչքերի վրայ: Ինքնահաւան ալ չեն իրենց ըրած մեծ խոստումները կատարելու՝ ունեցած պարտականութեան համար, եւ ինքզինքնին ուրիշներէ աւելի բարձր չեն դասեր:

Արիևուշ ըլլալ չեն ուզած որովհետեւ հարուստ են կամ աղքատ, հայ են կամ չինացի, սեւամորթ կամ ցեղանի, որովհետեւ կրօնքի մը կը պատկանին կամ ուրիշի մը. ո՛չ, միայն պատեալի մը համար է որ Արիևուշները կը միանան. արդեօք կրնա՞ք երեւակայել ինչո՞ւ: Պարզապէս որովհետեւ խաղ մըն է, այդ է պատեալը. եւ շատ ալ ուրախալի պատեալ մըն է. չէ՞ք կարծեր:

Եւ այդ խաղին մէկ մասն ալ այն է որ անոնց ամբողջ կեանքը աւելի գուարեալի կը դարձնէ: Ամբողջութիւնը հրաւրի կատակ մըն է եւ ինչպէս Մեծ Պետը կ'ըսէ. «Սկսուսութիւնը ամենալաւ խաղն է եւ ամենադժուարը՝ աղէկ խաղալ գիտնալու համար»:

Արիևուշ մը ըլլալը մէկուկէս փոխոյնէ աւելի ժողովուրդի մը բարեկամ դառնալ ըսել է. եւ ի՞նչ հսկայ գաղափար... Եւ այս ամբողջ ժողովուրդը աշխարհի ամէն կողմերէն խոստացած են իրար օգնել ամէն անգամ որ աւիքը ներկայանայ. ծիծաղել երբ հանդպին իրարու եւ... բարեկամներ դառնալ:

Միայն Անգլիոյ մէջ կան հինգ հարիւր հազար Արիևուշներ. այնպէս որ երբ հոն երբեք անհետ կայանալ պէտք չունինք նշարեւու համար անոնց նշանակը որ կը նմանի երեւոյթի տեսիլին:

Անշուշտ գիտէ՛ք անոր նշանակութիւն. անոր երեք մասերը կը յիշեցնեն Արիևուշի ըրած երեք խոստումները. երկրորդ կարգի Արիևուշ մը ըլլալէ առաջ: Անկա խոստացաւ իր ամբողջ ուժը նուիրել ծառայելու համար՝

Ա. Աստուծոյն, Հայրենիքին եւ ընտանիքին,

Բ. Միշտ օգնել ուրիշին,

Գ. Հնազանդի սկսուսական դաւանանքին:

Աւելի ճիշդ այն խոստումներն են որ ամէն սկսուս ըրած է. եւ իրեն յիշեցուցած են երեքնուկով:

Բայց մենք հիմա վերադառնանք մեր առաջին հարցումին, քէ ի՞նչ է Արիևուշ մը:

Երէ Հայ Արիևուշ մը տեսնէ՛ք պիտի նկատէ՛ք անոր զգեստը. որ բոլոր Հայ Արիևուշները կը կրեն. մուր կապոյտ փայլեց մը, հողազոյն պիտի մը հասարակ ժամանակ, կամ ցեղանի՝ հանդէսներու առեւ, խումբի պատկանող գոյնի վռնկապով:

Կրնա՞ք դիտել նաեւ անոր աստիճանները կամ

մասնագիտութիւնները իր վրայ կրած փոքրիկ նշանակներէն:

Երկու ներմակ գիծեր իր գրպանի վրայ ցոյց կուտան որ անիկա առաջնորդ մըն է:

Առաջնորդ մը այն Արիւնուշն է որ 6-7 հոգի-նոց յիմարակի մը կառավարիչն է ընտրուած:

Պէտք է դաժմ ատեն, ան է որ կը կրէ խմբակի դրօշակը որուն վրայ կը տեսնուի խմբակի անունն պատկերը: Սովորաբար կենդանի մըն է՝ ան է կամ ծաղիկ մը: Այն Արիւնուշը որ ընտրուած է առաջնորդին օգնել կը կոչուի փոխ-առաջնորդ մըն է կը կրէ միայն մէկ ներմակ գիծ գրպանի վրայ:

Հիմա եկէ՛ք տեսնեմք թէ ի՞նչ կ'ընեն Արի-նուշները:

Արիւնուշի մը առաջին որոն ուրիշի օգնական ըլլալն է: Ասիկա շատ դիւրին բան մը կը կարծուի, այնպէս չէ՞: Սակայն կարծուածին չափ ալ դիւրին չէ: Օգնութեան ձեւերը շատ են. կան մեծ ձեւեր, օրինակ, արկածեալի մը առաջին խնամքը տալ, հրդեհի մը միջոցին պաշարիւն կերպով օգնել, կամ վագոյ կատ-դած ձի մը կեցնել. բայց կան նաեւ պոփիկ ձեւերը, որոնք քանի որ նեղացուցիչ են, հաւա-սարապէս դժուար եւ կարեւոր:

Օրինակ լուացք ընել եւ անկողին շտկել, հեռու տեղ լուր մը տանել, սիրած եւ շատ ուզած մէկ գործը չընել որովհետեւ գուցէ մայրիկը կ'ուզէ որ ուրիշ բան մը ընէ այդ ժամուն, եւ ոչ միայն կատարել անոր կա-մանը այլ եւ գոհ եւ գուարք դիմագիծ մը ցոյց տալ... ահա ամենադժուարը:

Այսպէս, կը տեսնե՞ք թէ որքան բարոյակա-նութիւն կը պարունակէ «միշտ օգնել ուրիշին» խոստումը:

Երբ աղջիկ մը կ'ուզէ Արիւնուշ դառնալ, նախ իր ամբողջ ուժով կը փնտռէ իր ազգին խումբ-ըը, կը գտնէ զայն եւ կը միանայ անոնց ժո-ղովներուն: Յետոյ պէտք է լաւ ըմբռնէ երեք երեք խոստումներու նշանակութիւնը եւ կը փորձէ կատարել գտնոնք: Այդ միջոցին նա կը կոչուի նորընծայ, մինչեւ որ անցընէ քեկնա-ծուի բնութիւնները, եւ հրաման ունենայ Ա-րիւնուշի գգեստը կրելու: Արիւնուշ մը դառնա-լուն է որ կը միանայ խմբակի մը եւ կ'ըլլայ արտոյտ մը, ցորենի հասկ մը, եւ կամ մա-նիշակ մը: Եւ կը սկսի իր երկրորդ կարգի

բնութիւնը պատրաստել, որովհետեւ այս բըն-նութեան վերջն է, որ կրնայ մասնագիտական նշանակեքը վաստկել աշխատիլ, եւ ապագա-յի իր աջ քեւիւն վրայ կը կրէ գտնոնք:

Եւ ի՞նչ խաղ մ'է նշանակները վաստկիլը: Գանի՛, քանի՛, տեսակները կան անոնց, ա-ռաջին օգնութիւնը, լուացարարը, խոհարարը, լողորդը եւ այլն: Ասոնք այն նշանակներն են որ ամէն աղջիկ կրնայ վաստկիլ եւ արդէն ա-մէն աղջիկ ալ կը սիրէ գտնոնք առանց բացա-ռութեան:

Ըսի՞ք թէ քանի տարեկան պէտք է ըլլայ աղ-ջիկ մը Արիւնուշ ընդունելու համար. տասնու-մէկ տարեկան եւ աւելի, Գայլիկները 11 էն պակաս պէտք է ըլլան եւ յետոյ անոնք կը մեծնան Արիւնուշ ըլլալու համար:

Արիւնուշներու եւ Գայլիկներու ամէնէն ա-ւելի սիրած բանը ամառուան բանակումն է:

Գրեթէ ամէն խումբ բանակումի կ'երթայ ամառը, ամենաքիչը շաբաթուան մը համար:

Եւ չի կայ աւելի երանելի բան քան բաց օդին բնակարար հաստատուն վրանի մը տակ, առաւօտուն արթննալ եւ գտնել ինքզինքը հե-ռու ծովափը կամ անտառի մը մօտիկ, կալ հսկայ շերան մը կողքին բնութեան դիւրիչ գոյներով շրջապատուած: Ոչ մէկ քաղաք յի-շեցնող անկիւն, միայն երկինք եւ տեսարան, քոչուներու նուազում եւ գուցէ 1-2 կովերու բառաչ, որոնք կը մօտենան ձեր որպիսութիւ-նը հարցնելու համար:

Հապա խոհանոց շինելուն եւ նաչ պատրաս-տելուն գուարնութիւնը, շրջակաները մեծ պտոյտներ ընելը, եւ իրիկուան մթնշաղին նստելը կրակի շուրջ, երգել ու արտասանել...

Ահա թէ ինչ կ'ընեն Արիւնուշները, եւ ամէն տարի աւելի համով կը դառնայ անոնց կեան-քը որովհետեւ անոնք հետեւ կը ծանօթանան բանակումի կեանքին եւ հոն հանգիստ ապրե-լու միջոցներուն:

Ահա թէ ի՞նչ կ'ըսէ սկաւտական անգլիացի պետը Արիւնուշներու մասին, «Բանակումի եր-թալէ առաջ հաւասար օգտակար է սովորիլ այն քանի մը բաները որ անհրաժեշտ է գիտնալ հոն»: Եւ ահա ինչու կը սորվին Արիւնուշներու խումբերը դեռ քաղաքէն չհեռացած: Կը սոր-վին լաւ եւ արագ կրակ մը վառելու ձեւերը բաց օդին, եւ չոր փայտ գտնել ու հաւաքել.

որովհետեւ չկարծէք թէ հոն օդային կազի օ-նայտներ պիտի գտնեն: Եւ յետոյ պիտի սոր-վին ըմպելի մաքուր ջուր գտնել եւ այլն:

Անոնցմէ շատերը, առաջին անգամ ըլլալով, պիտի ապրին աստղերու տակ եւ պիտի դի-տեն գտնոնք ժամերով հասկնալու համար թէ ի՞նչ ըսել կ'ուզեն անոնք:

Պիտի ուզէ՞ք Արիւնուշ մը ըլլալ, հիմա որ անոնց վրայ քիչ մը գաղափար ունիք:

Թարգմանուած անգլիերէնէից

Փոխ-խմբապետուի

Զ. ԽԱՆՁՆԱՆ

ԶՕՐ . ՆԱԶԱՐԷԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայ Սպաներու Միութիւնը Զօր-Նա-գարբէկեանի յիշատակին՝ կազմակեր-պած էր սղահանդէս մը կիրակի մա-յիս 30 ին որուն հրաւիրուած էր նաև Հայ Արիւնուշ Միութեան Փարբիլ շրջանի սկաւտները, նախագահ զօրա-վար Կորկանեանի կողմէ:

Հանդէսին ներկայ էր խումբ բազ-մութիւն: Զօր . Կորկանեան բեմ հրա-ւիրեց եւ խօսք տուաւ Հայ Արիւնուշ ընդհ. պետին որ յարգանքի ուղերձ մը ըրաւ Հայ Արիւնուշ կողմէ: Ժողո-վը բուն ծափերով իր համակրանքը յայտնեց Հայ Արիւնուշին:

ԺՈՒԱՆՎԻԼԻ ՄԷՁ



Յունիս Տ ի հանդէսին, ինիօնիս սկաւտներու նախագահ վեր - Կիգօ կ'այցելէ Հայ Արիւնուշ բանակավայրը: Զախէն աջ (Ընդի. Պետը, Անտրէ Պէրրբան նախա-գային խմբապետ, կեդրոնական քարտուղարը, եւ պ. վեր-Կիգօ — դրօշին տակ վագրերու խմբապետ Արմիկ Զամախան

ԼԻՈՆԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻՆ ՀԱՆԳԵՍԱԸ

Երկար պատրաստութիւններէ յետոյ, Հայ Արիներու Միութեան Լիօնի Մասնաճիւղս ալ, իր առաջին տարեգարձը տօնելու բախտին արժանացաւ 23 Մայիս, 1931, Յրգ թաղապետարանի շքեղ սրահին մէջ՝ հովանաւորութեամբ մեր սիրելի Ընդհ. Պետ, պ. Գուրգէն Մեծատուրեանի:

Բեմը զարդարուած էր հայկական, ֆրանսական և խմբակային դրօշներով և Միութեանս խոնարհ խորհրդանշանակը, դժուած փոխ-խմբապետ, պ. Գեղամ Յակոբեանէ, թէ բեմէն և թէ հանդիսականներու կրծքին վրայ, քօքարթներու միջոցաւ, իր բարոյական բրորագանար կ'ընէր: Կարգապահ յանձնախումբը իր պարտականութեան գերին մէջ օրինակելի էր: Մասնաւոր հրաւիրադրերով, Միութեան տարեգարձ հանգէսին հրաւիրուած էին քաղաքի Միութեանց և կուսակցութեանց վերին մարմինները և ծանօթ անհատներ, որոնք ժողովուրդին հետ, փութացած էին սրտշաղ Ժամին, ներկայ գանուել հանդիսավայրը:

Հանգէսին կը նախագահէր Լիօնի Ազգային Միութեան նախագահ պրն. Մամաս Աբրահամեանը: Արդէն սրահը լեցուած էր յորդախուն բազմութեամբ, որոնք սկիզբէն կը սպասէին հանգէսի բացման: Որոշեալ Ժամին, հանգէսը բացուեցաւ «Յառաջ Նահատակ»ով: Յետոյ խօսք առաւ նախագահ, Մամաս Աբրահամեան յախ շնորհակալութիւն յայտնեց իր ընտրութեան համար: Յարգելի նախագահը, շեշտեց սկսուողական շարժման անհրաժեշտութիւնը և թուեց անոր բարերար ազդեցութիւնը ներկայ Հայ մատաղ սերունդին վրայ: Մասնաւորապէս ծանրացաւ Հայ մայրերու պարտականութեանց՝ հանգէս իրենց հոգեհատորներուն, զի կրթութիւնը կը սկսի մայրենի օրօրացէն: Կոչ ըրաւ

հայ ծնողներուն, որպէսզի իրենց պաշտօնները յանձնեն Հայ Ա. Միութեան խնամքին:

Բացատրեց «արի» բառին նշանակութիւնը. — «Հայոց հին պատմութեան մէջ, «Արին» մարմնացումն էր աստի-տութեան, քաջութեան, սպարիկի, և վերջապէս ազնիւ յատկութեանց մի հրաշալի տիպար: Հայ Արիները այսօր ոչ թէ կը տօնեն իրենց տարեգարձը, այլ հին օրերու զպրոցական ամալիքի տօնակատարութեանց նման, անոնք, ժրջան մեղուներ, այսօր եկեր են հայ ժողովուրդին ներկայացնելու իրենց գանկին մէջ նմբարած, մէկ տարուայ մեղրուէտ պաշարը, և աւելցուց. — «Ասոնցմէ շատեր գիշերային գատրնութեան սաներս են, որոնք ցերեկի ծանրածանր աշխատանքէն յետոյ, հակառակ իրենց յոգնած մարմնին և պարտասած մտքին, կանոնաւորաբար կը հետեւին, մայրենի լեզուի երեկոյան դաստանդութեան: Մեզ համար Հայ Արիները պարծանք են օտարներու առջև»: Կոչ ըրաւ քաջալերանքի և խրատուանքի, որոնց պատասխանուեցան ծափերով:

— «Քաջալերե՛նք, Հայ Արիները, որովհետեւ անոնք, մարդուած և կըրթուած ազգային զգացմունքներով, սպառազին սահմանուած են լինելու Հայաստանի գիտակից և օգտակար քաղաքացիներ»: (Անկերջ ծափեր):

Յետոյ, օրուան նախագահը անցաւ յայտադրին, և մեր սկսուա և դայլիկ եղբայրները և Ծիծեռնակները, թէ առանձին և թէ խմբովին, անկերջ ծափեր խրեցին հանդիսականներէն իրենց խմբերգներով, երգերով, խաղերով և արտասանութեամբ: Յայտադրի առաջին մասի վերջաւորութեան, վիճակահանութեան աճուրդի գրուեցաւ իզականկար մը գծուած և Միութեանս նուիրուած մեր սկանաւոր եղբայր

Գեղամ Յակոբեանէ: Տաս վայրկեանի մէջ վիճակահանութեան գումարը բարձրացաւ 275 Փրանքի և շահեցաւ Սահակեան, որ 10 Փրանք ևս նուիրեց Միութեանս: Երջարեութեան գրուած էին խմբատիպ, գեղազիլ յայտադրներ, որոնց կողքերը գեղազարդուած էին մեր Սկսուաներու կողմէ. զին 1 Փրանք:

Իր սիրայօժար մասնակցութիւնը բերած էր քաղաքի սիրուած երաժիշտ և տաղանդաւոր ջութակահար պ. Ա. Մելքոնեան, որ մէջ ընդ մէջ նուազեց գեղեցիկ կտորներ: Հինգ վայրկեան գաղար:

Յայտադրի երկրորդ մասը սկսեցաւ «Ինչո՞ւ Պինկէօլը մտար» խմբերգով: Յետոյ Մասնաճիւղիս քարտուղար Մանուկ Մ. Միքայէլեան գրաւոր կերպով պատկերացուց Միութեանս միամեայ նիւթական և բարոյական գործունէութիւնը, զոր ներփակ կը զրկենք Գործադիր Խորհուրդին: Եւ Մասնաճիւղիս կողմէ շնորհակալութիւն յայտնեց Ընդհ. Պետ Գ. Մեծատուրեանի, որ իր հովանաւորութեամբ պատուեց մեր տարեգարձ-հանգէսը. նոյնպէս և օրուան նախագահ պ. Մամաս Աբրահամեանի, Հայրենակցական Միութեանց և կուսակցութեանց վարչութեանց և

յարգոյ հանդիսականներուն, որոնք իրենց ներկայութեամբ քաջալերած էին մեզ, մեր գծուարին ձեռնարկին մէջ:

Ու վերջապէս խօսք առաւ Մասնաճիւղիս հանգէսին հովանաւոր և Միութեան Ընդհ. Պետ պ. Գ. Մեծատուրեան: Նախ շնորհակալութիւն յայտնեց, օրուան նախագահին և բոլոր հանդիսականներուն որոնք փութացած էին իրենց ներկայութեամբ քաջալերել Հայ Արիները: Նկարագրեց Մասնաճիւղիս կազմակերպութիւնը և ըսաւ. — «Աւելորդ կը նկատեմ անդրադատնալ Լիօնի Մասնաճիւղի միամեայ գործունէութեան զոր դուք անձամբ լսելու բախտն ունեցաք և ծախահարեցիք: Բայց և այնպէս անհրաժեշտ է խոստովանել որ Հայ Արիներու Լիօնի Մասնաճիւղը իր կոչումի գերին մէջ, ապրելու, և ձեր և մեր գնահատանքին արժանի լինելու»: Յետոյ աւելցուց. — «Այսօրուան հանգէսը տարեգարձ-յորեկան չէ Լիօնի մեր սկսուա եղբայրներուն համար, այլ մի հանգրուան, որուն վրայ անոնք կանգ կ'առնեն մէկ րոպէ գիտելու համար իրենց միամեայ կարած ճանապարհը, և դատելու թէ ի՞նչ կայ գեւ ընելիք ի ծառայութիւն սկսուաութեան, որ կը զիւթէ, կը հըմայէ և մազնիսական գործութեամբ գէ-



ՓԱՐԻՑԻ ԵՐԶԱՆԻ ԳՈՅԼԻԿ ԽՐԵՍՏՈՒՆԵՐ ԼԵՒՍԱՆԿԱՐ ԻԱԾ ԸՆԴՀ. ԳՈՅԼԻԿԱՊԵՏ ԱՐՄԷՆ ԵԱՆՈՒ ԵՏՏ

պի իրեն կը քաշէ Հայ Արիներու քայլերը: Այսօր մտամփոփման մի հանգրուան է»: Մասնաւորաբար ծանրացաւ հայ ծնողքի դերին վրայ հանդէպ իր գաւաղներուն. — «Ընտանիքը չափազանց մեծ դեր ունի իր գաւաղը հայ պահելու գործին՝ դաստիարակութեան և նկարագրի կերտման մէջ: Մենք եկած ենք քճեռք ձեռքի, հայ ծնողքին հետ գոչելու. ամէն բան եղաւ, բայց այս մէկը ո՛չ, այլասերում ո՛չ: (Մտփեր): Այս ամէն տառապանքի, չարչարանքի և անարդարութեան ենթարկուեցանք և հանդուրժեցինք, բայց այս մէկին չենք կարող հանդուրժել»: ծափեր): Կոչ ըրաւ հայ գիտակից երիտասարդութեան, որպէսզի համախորհրդուն Միութեանս շուրջ: Կոչ ըրաւ հանդիսականներուն և ըսաւ. — «Մենք և դուք պարտինք միասին դուրս գալու հայ մանուկներուն վրայ և օժանդակել անոնց և՛ նրբագէտ և՛ բարոյագէտ, և ցոյց տալ իրենց, թէ իրենք լքուած չեն, և վերջապէս, ինչպէս այսօր, այնպէս ալ միշտ, խրատուները զանոնք իրենց նուիրական ձեռնարկին մէջ: Յետոյ վեր առաւ «Հայ սկսուածին խոստումն ու գաւառանքը» և բացատրեց զանոնք հրաշարիօրէն՝ վեր հանելով հայ ցեղի ապական աշխատասիրութեան և առաքելութեան ոգին. — «Օտարներու կարծիքը շատ մեծ է հայ սկսուածներու մասին. անոնք կը գոչեն հանուր աշխարհին. «Բոլոր սկսուածները լաւ են, բայց աւելի լաւ են հայ սկսուածները», որ հակասակ այնքան այլազան դժուարութեանց, իրենց տարազրութեան մէջ»: Հայ սկսուածները միշտ առաջ են կեանքի պայքարի այլազան ճիւղերուն մէջ: Մաղթենք որ Հայ Արիներու Միութիւնը՝ զիտակից իր պարտականութեանց, իր յարասե աշխատանքով, միշտ պատրաստ, յոյսի, լոյսի և հաւատարի ջանակիր սկսուածներ հասցնէ, որոնք մօտիկ ապագային, երբ մեր երտպուած հայրենիքի անշեղ արշալոյսը

ծագի, դառնան դաղթող սահմիրաներ մեր դրախտալէտ Մայր Հայաստանի, գոչելով մեր նուիրական նշանաբանը՝ միշտ պատրաստ: (Անվերջ ծափեր): Հանդիսականներուն ուրախութիւնն ու խանդավառութիւնը հասած էր իր գաղաթնակէտին, և կարծես մագնիսացած էին, նոյնացած այն գաղափարներուն հետ, որոս կ'արտայայտէր մեր սիրելի պետ, պ. Գուրգէն Մեծատուրեան: Յետոյ, մի քանի դուարթ երգերէ, խաղերէ և անակնկալներէ վերջ, տարելիցի առթիւ Ընդհ. Պետի և խմբապետի կողմէ, նշանակներ բաշխուեցան այն սկսուածներուն, որոնք լրացուցած էին իրենց մէկ տարուայ սկսուածական շրջանը: Սմբարկեա պ. Գառնիկ Տօնէլեան ջանք չէր խնայած հանդէսի շքուղութեան համար: Ծնորհատուրելի էր: Մասնաճիւղիս քարտուղար Մ. Մ. Միքայէլեանց, կարգաց բանաձեւ մը, որով Մասնաճիւղս իր շնորհակալիքը և յարգանքը կը յայտնէր Հայ Արիներու Միութեան Հովանաւորող Մարմընին, և իր նուիրումի խոստումը սկսուածական վեճ խաչարին: Պէտք է խոստովանել որ բոլոր սկսուածներն ալ յաջող էին իրենց ստանձնած գերերուն մէջ և մեծ տղաւորութիւն ձգեցին հանդիսականներուն վրայ: Այստեղ շատ երկար կ'ըլլար, եթէ թուէինք անոնց յաջողութիւնները և խրամ ծափերը հանդիսականներին: Վերջապէս, հանդէսը փակուեցաւ նախագահի վերջարանով, ժամը 12 ին. մեր սկսուածները կը թնդացնէին սրահը «Հայ Արին միշտ պատրաստ» սկսուածական քայլերով: Հանդիսականները. չէին ուզեր հեռանալ այսքան ջերմ և խանդավառիչ մթնոլորտէ մը: Նախագահի վերջարանէն յետոյ, ծընողքներ և աչքառու անհատներ եկան շնորհատուրեցին մեր ողևոր, խանդավառ և շենչող յոյսերու մեծ տղաւորութեան տակ:

ՄԱՆՈՒԿ Մ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



ԳՕՅԼԻԿՆԵՐՈՒ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ

Զատկական բանակումէն վերջ, որ այնքան յաջող անցաւ, գայլիկները կը պատրաստեն իրենց ամառուան բանակումները. Հոգեզարուտի արձակուրդին Փարիզի գայլիկ-Աքելաները բանակեցին Պիէոլիլ եւ ունեցան խմբապետական դաստիարակութեանց շրջան մը ընդհ. պետին և գայլիկապետին կողմէ:

ՅԲԱՆՍԱԿԱՆ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ՀԱՆԴԷՍԸ

Կիրակի Յունիս 7ին Սթար Բէրշինիկի մէջ, Փրանսական երեք սկսուածական միութիւնները տուի նիրենց տարեկան մեծ հանդէսը, նախագահութեամբ մարէշալ Լիօթէի: Հայ Արիները շարաթ գիշերուրնէ բանակեցին «Ինիօնիսթ» սկսուածներուն հետ, և կիրակի օր մասնակցեցան այս հանդիսաւորութեան որուն մասնաւորապէս հրաւիրուած էին:

Հանդէսին ներկայ էր նաեւ Միջագային Գրասենեակի տնօրէն Հիւպըրթ Մարթին որ մասնաւորապէս եկած էր Լիոնտին, որուն հետ կարճ տեսակցութիւն մը ունեցաւ Հայ Արիներու ընդհ. պետը:

ԵՐԷՅՆԵՐՈՒ ԹԷՅԱՍԵՂԱՆԸ

Յուլիս 5 կիրակի, Ինիօն տը Բարիլ սրահին մէջ (14, սիւ տը Թրէվիս) տեղի ունեցաւ Փարիզի շրջանի երէցներու թէյասեղանը: Սոյն թէյասեղանին հասցիքը պէտք է յատկացուի երէցներու մասնակցութեան Զուրեցերիոյ ձէմպօրիին որ տեղի կ'ունենայ այս ամառ և որուն պիտի մասնակցին Հայ

Արիներու Միութեան տասը ներկայացուցիչները:

Թէյասեղանը ունեցաւ նաեւ զեղարուեստական բաժին մը որուն իրենց մասնակցութիւնը բերին հայ և օտար սիրուած արուեստագէտներ:

ՊԻԷՈՎԻԼԻ ՄԷՋ

Հոգեզարուտին 1000 Փրանսացի սկսուածներ բանակեցին Պիէոլիլի մէջ պ. Մարք Սանիէի հոգերու վրայ, արժանանալով ամէն տեսակ հոգածու-



թեան մեր սիրելի բարեկամին կողմէ: Այս առթիւ պ. Մարք Սանիէ կը կրէր սկսուածական միջազգային շնորհակալութեան շքանշանը զոր իրեն նուիրուեցաւ Հայ Արիներուն կողմէ ի նշան խոր երախտագիտութեան ա՛յն բոլոր օգնութեանց համար զոր ան կ'ընէ մեզ ամէն տեսն:

Գ Ո Ր Ծ Ա Գ Ի Ր Ե Ռ Ր Հ Ո Ի Ր Գ

ԿԱՂՆԻ

ՊԱՇՏՈՆՆԵՐ

Մ Ի Չ ա գ գ ա յ Ի ն Պ ա տ ու լ Ի ր ա կ

Յառաջիկայ ամառ տեղի կ'ունենայ երեց սկաուտներու շէմպօրին Զուխեբիոյ մէջ, որուն կրաւիրուած են նաև հայ երեցները: Գ. Խ. որոշած է 10 ներկայացուցիչ ուղարկել: Հայ Արիներու Ընդհ. Պետը միջազգային պատուիրակ նշանակած է Գ. Խ. անդամ Արմիկ Զամալեանը որ պիտի ղեկավարէ սոյն պատուիրակուրիւնը. Եւ ներկայացնէ Գործադիր Խորհուրդը երեցներու միջազգային համաժողովին:

ԲԱՆԱԿՈՒՄԻ ՊԵՏ

Երեցներու բանակումի պետ նշանակուած է երեց-առաջնորդ Յակոբ Պետիկեան:

Գ Ա Յ Լ Ի Կ Ն Ե Ր

ՍԻՕՆԷ

Սիօնէ խմբի փոխ-խմբապետուի նշանակուած է Օրիորդ Էլիզ Բարունակեան:

Կաղնի խումբի խմբապետուի նշանակուած է Օրիորդ Լիւսի Բարունակեան:

ՎԷՆԿՈՒՆԿԱ

Վէնկուկա խմբի խմբապետուի նշանակուած է Օր. Ամալիա Ղազարեան Եւ օգնական՝ Շուշան Մեծատուրեան:

Ս Կ Ա Ո Ի Տ Ն Ե Ր

ՓԱՐԻԶ III

Փարիզ III խմբի խմբապետ նշանակուած է Վասիկ Տէր-Դաւրեան:

ԼԻՕՆ I

Լիօնի Մասնակիցի ֆարտուղար նշանակուած է Մանուկ Միքայէլեան:

ՊՈՒՔՐԷՇ I

Շրջանային խմբապետ նշանակուած է Յարութիւն Միրիանեան:

Տօքթ. Սիրաբեան, Թօրիօտէն մէկ տարեկան Հայ Արի կը նուիրէ հայկական հաստատութեան մը:



ԵՐԿՈՒ ԳԱՅԼԻԿՆԵՐԸ ԿԱՊԵՐՈՒ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՑՆԵՆ

„ՀԱՅ ԱՐԻ“ Ի ՄՐՑՈՒՄԸ

Հայ Արիին մէջ առաջին անգամ ըլլալով, մրցումը կը բանամ մեր բոլոր ընթերցողներուն և մեր բոլոր Արիներուն. այս մրցումը կը նպաստէ «Քիմի» խաղին և աչքի վարժութիւններուն, որով կընաք ապագային ստորուած թուղթեր, նկարներ և զանազան կոտորուած առարկաներ միացնել:

Այս մրցումը երկու անգամէն պիտի վերջանայ, և ահա մէկ գիրը այս թիւին մէջ է, միւս գիրը յաջորդ թիւին մէջ պիտի ըլլայ:

Շահողները երկու մասի բաժնուած են.

Առաջին — անոնք, որոնք այս մրցումին պիտի մասնակցին, մինչև Յուլիս 15 պէտք է ղրկեն, կազմած երկու գիրերը յաջողութեամբ. այսինքն գիրերուն յատակազիծը դժեւ մաքուր և ղրկել: Ասոնք պիտի շահեն. Ա. — մէկ տարուայ Հայ Արի ամսաթերթ, Բ. — 6 ամսուայ, Գ. — 6 ամսուայ, Դ. — 3


ամսուայ ամսաթերթեր, Ընդ. Պետին կողմէ պիտի ստանան շահող թիւերը: Շահողներու երկրորդ մասը.

Ազգային Բանակումին, երկու գիրերուն կտորները իրար պիտի խառնուի, որով մրցումի մասնակցողները պիտի կազմեն երկու գիրերը, յաջողութեամբ և շուտ կազմողները պիտի ստանան Ազգային Բանակումի գեղեցիկ նկարներէն 20 հատ առաջինէն մինչև հինգերորդ — իսկ վեցերորդէն մինչև տասներհինգերորդ տասնական նկարներ Մարտէյլի Ա. խումբին կողմանէ:

Շահողներուն Ա. Բ.ները յայտնի ըլլալու համար նամակին վրայի դրոշմներուն թուականները պիտի նայինք: Ամէն անոնք որոնք պիտի մասնակցին, պէտք է անպայման նամակով ղրկեն, ապա թէ ոչ չի ընդունուիր:

Նամակները ուղարկել այս հասցէին:

10, Rue Bel Air, Marseille. Yervant Sélian



ԱՄԱՌՈՒԱՅ ՄԵԾ

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԾ ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԻ ՍԿՍՈՒՏ,
ԴԱՅԼԻԿ, ԵՒ ԵՐԷՑ ՍԿՍՈՒՏՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ

պ. ԱՐՐԱՀԱՄ ԳԻԼԼԻՍԱՆԴԱՆԵԱՆԻ

Նախընտրած Հայ Արիներու Զուիցերիոյ ձեմպօրիի
մասնակցութեան և ինպաստ Ազգային Բանակումի

ԿԻՐԱԿԻ ՅՈՒԼԻՍ 19 ԱՄԲՈՂՁ ՕՐԸ

ԲԱԹ - ՏՈՒՍԻ ԴՍՇՏԻՆ ՎՐԱՅ

Մ Ո Ւ Տ Ք Ը Ա Չ Ա Տ Է

Սկաուտական բանակում, մրցումներ, դաշտային
սկաուտական խաղեր, պիւֆէ, գուարնալիքներ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ. —

Շոգեկառք *Էնվալիտէն* կամ *Բօն-Միրապօէն* իջնել *Մէտտօն-Վալ-*
Ճիէօրի: Առաջնորդող Սկաուտներ եւ ինքնաշարժ կառքեր ժամը 10ին,
1 ին եւ 2 ին:

270
50